

## ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

### ՍՈՒՐԲ ԽՈՐՀՐԴԻՆ ԵՐԿՅՈՒՂՈՎ ԵՎ ԶԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ ՄԵՐՁԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ահուդողով սոսկում են իմ ոսկորները և հիացմամբ սարսափում է իմ անձը, երբ հիշում եմ Ահագին և Մեծ Խորհրդի մերձավորությունը: Այս խորհրդածություններով տարված անընդհատ ալեկոծվում է իմ միտքը. կամենում եմ մերձենալ Փափագելուն, բայց արգելում է իմ անարժանությունը, իսկ մերժելն ու հեռանալը կորուստ է հոգուս: Քանզի կան շատերը, որոնք կամ չարաչար վարքով են մերձենում, կամ էլ հեռանում են անօրենությամբ. սրանք երկուսն էլ սատանայական են, քանզի մեկը չի իմանում Ահեղ Խորհրդի զորությունը, այլ խղճմտանքի հանդիմանությամբ է մերձենում, որը սովորություն է դարձրել: Այն ոչ թե փրկություն, այլ դատապարտություն է, ոչ թե մեղքերին թողություն, այլ անօրենությունների բազմացում է: Իսկ մեկ ուրիշն Այն իբրև աննշան և ոչ կարևոր բան համարելով հեռանում է՝ արհամարհելով, քանզի չի ճանաչում Մեծ Խորհրդի Զորությունը և Շնորհը, կամ էլ Խորհուրդն իրեն պատիվ համարելով, հաճախակի չի մերձենում, որը ոչ թե պատիվ համարել է, այլ հիմարություն և ծուլություն է՝ հեռանալ է Կյանքից և փափագել է խավարն ու մահը, որի մասին Տերն Ինքն ասաց, թե՝ «Ես եմ կենաց Հացը, ով որ ուտի այս Հացից, կապրի հավիտյան, և այն Հացը, որ Ես կտամ, Իմ Մարմինն է, որը Ես կտամ, որպեսզի աշխարհը կյանք ունենա» (Հովհ. 6. 51, 52):

Եվ արդ, Քրիստոսի Մարմնից և Արյունից հեռացողների մասին, Իր խոսքը առավել ևս հաստատելու համար, «Ճշմարիտն» է ավելացնում՝ «Ճշմարիտ, Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չուտեք մարդու Որդու Մարմինը և չըմպեք Նրա Արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա» (Հովհ. 6. 54): Եվ ովքեր հավիտենական կյանք չունեն, նրանց ժառանգությունը աղջամղջի խավարն ու գեհեմի հուրն է: Քանզի ամեն մեկը, որը հեռու է Սուրբ Խորհրդից, հեշտությամբ է ընդունում սատանայական ախտը և հանապազ նրան օթևան է դառնում: Անձը պետք է կամ Հոգու շնորհներից վայելի, կամ պիղծ ոգուց ընդունի (տանջանքներ): «Տիրոջ Հոգին հեռացավ Սավուղից, և նրան չար այսն էր նեղում»: Քանզի եթե այգին պարիսպ չունենա, անտառի ապականիչ գազանները և խոզերը մտնելով կապականեն այն. և ովքեր չեն պարսպվում Սուրբ Խորհրդով, նրանց անձերը դառնում են դևերի բնակարաններ: Փախչելով հրեշտակների ժողովից, ընկնում են դևերի բանակի մեջ, և դևերը հեշտությամբ բռնում են նրանց, տանջում են նրանց հոգիները և չարաչար լլկում նրանց մարմինները, երբեմն հրի մեջ, երբեմն՝ ջրի: Եվ արդ, տես և փարատի՛ր քեզնից քո հիմարությունը, ուղղի՛ր քո թերահավատությունը, խրատի՛ր քեզ՝ ծուլությունից դեպի աշխատասիրություն, և շտապիր սրբվել մեղքերից և մեծ փափագով փութա՛ հոգևոր Սուրբ Սեղանին, որպեսզի չմերժվես քո քրիստոնյա լինելու անունից: Քանզի քրիստոնեությունը հավատքն է, մկրտությունը և Սուրբ Խորհրդի վայելումը, և ով սրանցից

հեռու է և թերի, թերի է քրիստոնեությունից, որովհետև ո՛չ Քրիստոս է նրա մեջ բնակվում և ո՛չ նա՝ Քրիստոսի մեջ: Քանզի ասում է՝ ով ուտի Իմ Մարմինը, նա Իմ մեջ կբնակվի և Ես՝ նրա մեջ:

Եվ արդ, ով կամենում է բնակվել Նրա մեջ, այնպես պետք է ընթանա, ինչպես Նա ընթացավ: Եվ ով որ ունի այն հույսը, թե Աստված իր մեջ կբնակվի և ինքը՝ Աստծո մեջ, այնպես պետք է ջանա սուրբ լինել ըստ մարդկային տկարության չափի, ինչպես որ Նա է սուրբ՝, և ապա մերժենալ (Խորհրդին): Եվ ով այսպես չի մերժենում, պարզ է, որ իր դատապարտության համար է մերժենում, քանզի Տերունական Սուրբ Մարմնին մոտենալը սրբերի համար Լույս է և լուսավորում է Հոգու մերձավորությամբ, իսկ պիղծերի համար հուր է, այրում և ապականում է նրանց, ովքեր մերժենում են խղճի հանդիմանություն ունենալով հանդերձ: Քանզի երբ քո միտքը քո սրբության մասին չի վկայում, նշանակում է, որ քո մերժենալը Սուրբ Խորհրդին Աստծո կամքով չէ, ինչպես և Պողոսն է ասում. «Այս է Աստծո կամքը՝ ձեր խղճմտանքի վկայությունը»: Եվ եթե քո միտքը վկայում է քո սրբության մասին, քո մերձավորությունը Աստծո կամքով է: Իսկ եթե խղճի հանդիմանություն ունենալով մերժենաս, գիտցի՛ր, որ դատապարտված դուրս կգաս և անօրեն կհամարվես, քան բոլոր անօրենները, որովհետև սա արյունահեղ սպանողների չարություններից առավել անօրենություն է, որովհետև երբ մարդ մարդու է սպանում, մարդասպան է կոչվում, իսկ ով անարժանությամբ Տիրոջ Մարմնին է հաղորդվում, նա Աստվածասպան է կոչվում, որովհետև վերստին խաչում է Աստծո Որդուն:

Եվ արդ՝ տես, թե ո՞ր Սեղանին ես անօրենությամբ մոտենում, Սեղանին՝ որից սոսկում և սարսում են վերին զորությունները, իսկ դու հանդգնում ես մերժենալ պիղծ շրթունքներովդ: Եթե մեկի վրայից գարշահոտություն գա, նա չի հանդգնի մերժենալ թագավորին, իսկ Երկնավոր Թագավորին նեխած հոգուդ մեջ ես ընդունում և մեծ ահով չես սոսկում, ցեխոտ ձեռքերով մերժենում ես կերակուր ընդունելու և հաղորդվում ես անխտրապես զեռաթաթախ հոգովդ: Ո՛հ խորք անօրենությունների, ո՛հ ահեղ արհավիրք, ո՛հ անամոթ լրբություն և սաստիկ ամբարշտություն, խղճմտանքի հանդիմանությամբ և աղտեղի հոգովդ ընթանալով մերժենում ես Մեծ Խորհրդի Սրբությանը, և ո՞վ է արդյոք տեսել այս անօրենությունից առավել հանդուգն հանդգնություն: Երբ մարդ մարդու հանդեպ է մեղանչում, աղաչում է Աստծուն, իսկ ով Աստծո հանդեպ է մեղանչում, ո՞ւմ աղաչի, քանզի ոչ թե մարդու արյանն են պարտական լինում, այլ Աստծո Որդու Մարմնին և Արյանը: Արդ նայի՛ր և տես, թե ինչպես ես հաղորդվում Սուրբ Խորհրդին, քանզի եթե ակնկալում ես Աստծո Արքայությունը մտնել, առանց խղճի ընդունի՛ր նաև հաղորդության Խորհուրդը, իսկ եթե թերահավատ ես Երկնքի Արքայության համար, ապա անարժան ես նաև Սուրբ Խորհրդին: Քանզի հնարավոր չէ արժանի լինել Սուրբ Խորհրդին, բայց Արքայությանը՝ ոչ, որովհետև այդ երկուսը ստանալու համար նույնչափ սրբություն պետք է ունենալ:

Բայց ոմանք թեպես չեն հաղորդվում խղճմտանքի պատճառով, սակայն կեղծավորությամբ մնում են (եկեղեցում), դրսիներին կարծել տալով, թե իրենք ևս հաղորդվողներից են: Քանզի (սահմանված է),

որ ամեն ոք, ով արժանի չէ Խորհրդին, ոչ ներսում կանգնելու, ոչ աղոթելու և ոչ հաղորդության, թող դուրս գան անարժանների հետ: Մի՛ կեղծավորի՝ արժանավորի պես ներսում մնալով և չհաղորդվելով իբրև անարժան: Ինչո՞ւ ես արհամարհում Ահավոր և Մեծ Խորհուրդը: Չգիտե՞ս արդյոք, որ երբ Սուրբ Խորհուրդը Սուրբ Սեղան է բարձրանում, այնժամ վերևից երկինքն է բացվում և Քրիստոս է այնտեղ իջնում, երկնքից հրեշտակների զորքերն են ծավալվում երկրի վրա և բոլորվում են Սեղանի շուրջը, ուր Տերունական Մեծ Խորհուրդն է, Որը բոլորին լցնում է Սուրբ Հոգով: Այնժամ խղճի հանդիմանություն ունեցողները արժանի չեն հաղորդվելու Այնպիսի Խորհրդին, մինչև ապաշխարությամբ չուղղվեն: Լսիր նաև քարոզի ահեղ բողոքը, որը դուրս է հրավիրում բոլոր չմկրտվածներին, թերահավատներին, չուսացողներին, որովհետև այդպիսիները պատրաստ չեն սրբությամբ (մերձենալուն), իսկ ներսում մնացողներին աղաղակում է՝ նայեցե՛ք ձեր անձերին, քննեցե՛ք ձեր սրտերը, որևէ մեկը խղճի հանդիմանությամբ, խորամանկությամբ և պատրանքներով, երկմտությամբ և թերահավատությամբ թող չմերձենա, քանզի Խորհրդի Սրբությունը սրբերին և անարատներին է վայել: Եվ այս լսելով չենք դողում և սոսկում Ահեղ և Մեծ Խորհրդից, Որից սարսափում են Սերովբեները, և Քերովբեները չեն համարձակվում մերձենալ, հրեշտակներն ու հրեշտակապետերը սոսկում են դողալով և բոլոր վերին զորությունները սարսում են հիացմամբ: Իսկ որքա՞ն սաստիկ տանջանքներով պիտի մաշվի մարդը, եթե հանցավոր խղճով հպվի Նրան, ինչպես խռիվը երբ կրակին հպվի, իսկույն կայրվի և կապականվի, որովհետև նա թշնամացավ (Աստծուն)՝ փոքր-ինչ համարելով Քրիստոսի Մարմինը:

Բայց դու Մարմնին մի՛ նայիր լոկ որպես հացի և Արյունը որպես գինի մի՛ համարիր, քանզի տեսանելի չէ Սուրբ Խորհրդի ահավորությունը, այլ իմանալի է Նրա զորությունը, քանզի Քրիստոս խորհուրդներում և մկրտության ժամանակ ոչինչ տեսանելի մեզ չավանդեց, այլ իմանալի: Աստվածային խոսքին ենք հավատում, որ ասում է, թե՝ «Այս է Իմ Մարմինը և Արյունը. ով ուտի Իմ Մարմինը և ըմպի Իմ Արյունը, նա կբնակվի Իմ մեջ և ես՝ նրա մեջ, և ես նրան վերջին օրը հարություն պիտի տամ» (Հովհ. 6. 55): Իսկ մենք ճշմարիտ հավատով Սեղանի վրա Քրիստոսին ենք ճանաչում, Նրան ենք մերձենում, Նրան տեսնում, Նրան շոշափում, Նրան համբուրում, Նրան ընդունում մեր մեջ և դառնում Աստծո որդիներ, մարմին և անդամներ:

Արդ, ով այսպիսի հավատով չհավատա, և Այն չընդունի որպես Աստծո Որդու Մարմին, հեռու է Աստծո օգնականությունից և Հոգու շնորհներից, հեռու է նաև մեղքերի թողությունից և հավիտենական կյանքից: Այդպիսինը հարության և փրկության հույս չունի և մերժված է քրիստոնեական հավատից, որով մեզ համար Քրիստոսի Արյան հեղմամբ փրկություն եղավ: Եվ արդ, թող ոչ ոք Նրան խղճի հանդիմանությամբ չմերձենա, ոչ ոք թերահավատությամբ չմերձենա, ոչ ոք տկարությամբ չմիանա, այլ ճշմարտապես հավատալով, թե եկեղեցին երկինքն է Մեծ և Ահեղ

Խորհրդի համար, Սեղանը Խորհրդի փառքի Աթոռն է և Քրիստոս է իջնում Դրա վրա, Որը միշտ բաշխվում է բոլորի փրկության համար:

Եվ արդ, ո՛վ մարդ, քե՛զ նայիր և տես, որտե՞ղ ես կանգնած, Ո՞ւմ ես տեսնում, Ո՞ւմ համբուրում և քո ներսը ընդունում. կանգնած ես երկնային գորությունների հետ, օրհնում ես հրեշտակների հետ, բարեբանում ես Սերովբեների հետ, Քրիստոսին ես տեսնում, Քրիստոսին համբուրում, Քրիստոսին ես վերցնում և ճաշակում և Սուրբ Հոգով լցված և աստվածային շնորհներով պայծառացած գորանում հանապազ: Այդ պատճառով նաև դո՛ւք, քահանաներ և սպասավորներ՝ Սուրբ Խորհրդի մատակարարներ, ահով մոտեցեք, երկյուղով պահեք, սրբությամբ սպասավորեք և զգուշությամբ մատակարարեք. արքունի Գանձ ունեք, մեծ երկյուղով զգուշացեք պահպանության համար, քանզի նաև ձեզ համար աններելի տանջանք է սպասվում, եթե ճանաչեք մի չար մեկին, որը զա և հանդգնի մոտենալ Քրիստոսի Սուրբ Մարմնին, ակնածեք խրատել, մերժել և հանդիմանել: Բայց եթե ծուլություն և աչառություն անելու պատճառով Քրիստոսի Սուրբ Մարմինը անօրեններին ու անարժաններին բաշխեք, զցեք ինչպես շների և խոզերի առջև, ինչպիսի՞ ներմամբ թողություն պիտի ստանաք, և որքա՞ն պատիժների և տանջանքների պիտի մատնվեք, որ Տերունական Մարմնի մատինջներ և պարտականներ դարձաք: Ահա իշխում եք Քրիստոսի համար, կերակրվում եք Քրիստոսի անվան համար և Քրիստոսին անօրեններին եք մատնում և չարչարում անարժանների պիղծ վարքերով:

Արդ նայիր քո անձին, ո՛վ քահանա, և ճանաչի՛ր քեզ, ի՞նչն է քո քահանայության վաստակը և ի՞նչ գործ ես ստացել անելու: Ծառա չես քո ժողովրդի համար, և ոչ էլ արտ հնձող և կալսող, այլ կարգվել ես ուսուցանելու և խրատելու, մերժելու և հանդիմանելու համար: Այս է քահանայության գործը, որը մշտապես հարկ է անել, որովհետև այն բանի համար այսպիսի պատվով պատվվեցիք և իշխանություն ունեք ամենքի վրա, որպեսզի այսպիսիներին քննեք և հանդիմանելով մերժեք: Իսկ այն քահանաները, որոնք այդպիսիներին չեն ճանաչում, նրանք ևս առավել աններելի տանջանքների պիտի ենթարկվեն, ինչպես և Պողոսն է ասում. «Ով որ ուտի այս հացը կամ խմի Տիրոջ այս բաժակն անարժանորեն, պարտական պիտի լինի Տիրոջ Մարմնին և Արյանը» (Ա Կորնթ. 11. 27): Այլ նաև բազում մարդկանց արբեցնում է Դատաստանի ճաշակմամբ, չարաչար ախտերով և տարաժամ հիվանդությունների **դառնություններով հանում է աշխարհից**, ինչպես և ասում է. «Տիրոջ Մարմնին անարժանորեն հաղորդվելու պատճառով ձեր մեջ բազում հիվանդներ ու ցավագարներ կան, և շատերն էլ մեռած են» (Ա Կորնթ. 11. 30): Որովհետև ոմանք անարժանաբար Խորհրդին մերձենալուց մոլեկան ախտերով տանջվում են, և ոմանք նույն պատճառով խեղված և անդամալուծ դարձած շրջում են իրենց կյանքի բոլոր օրերում: Ոմանք այս պատճառով հարվածների և անբժշկելի ցավերի մեջ են ընկնում, ոմանք նույն պատճառով բանտ են մտնում և կապանքներով կապվում, ոմանք էլ անզավակ են հեռանում այս աշխարհից: Այլև բազում ցասում է գալիս բույսերի և

պտուղների վրա, և մարդկանց և անասունների տարածած մահեր է լինում Տիրոջ Մարմինն և Արյանը անարժանաբար հաղորդվելու հետևանքով:

Այդ պատճառով մեծ երկյուղով մոտենանք, մեծ զգուշությամբ մեր սրտերը քննենք, ծուլանալու պատճառով միայն տոներին չհետաձգենք հաղորդության մոտենալը, որովհետև և՛ ուրբաթ օրը, և՛ կիրակի օրը, և՛ Հոգեգալստյան տոնին և Ջատկին նույնն է Ջենումը (Պատարագը) և նույն Խորհուրդն է կատարվում: Եվ դու հաղորդությանը մերժենալուց գոնե միտքդ միայն սուրբ պահիր և այլ օրվա մի՛ հետաձգիր: Հանդգնություն չէ սուրբ սրտով բազում անգամ մերժենալը, որովհետև այդպես առավել ևս ապրեցնում և նորոգում ես հոգիդ, իսկ եթե կյանքիդ բոլոր օրերում մի անգամ էլ անարժանությամբ և խղճի հանդիմանությամբ մերժենաս, կկորցնես հոգիդ: Տե՛ս, Կայենը մի հանցանք գործեց և կորավ, մի հանցանք գործեց Քանանը և կորավ, Աքաբը մի հանցանք գործեց և կորավ, մի հանցանք գործեց Հուդան և կորավ, և ովքեր Քրիստոսին սպանեցին, մի անգամ սպանեցին և կորան: Եվ, եթե դու քո կյանքի բոլոր օրերում մի անգամ անարժանությամբ Սուրբ Խորհրդին մոտենաս, հոգիդ կսպանես հավիտենական տանջանքի կորստյամբ:

Բայց եթե ասես, թե Տոնին պիտի մերժենամ՝ քառասուն օր սրբվելուց հետո... Եվ արդ, ի՞նչ օգուտ կստանաս մի անգամ սրբվելուց, երբ դարձյալ պիտի աղտոտվես, ի՞նչ օգուտ լվացվելուց, երբ դարձյալ պիտի ցեխոտվես: Ի՞նչ օգուտ շինելուց, եթե դարձյալ քանդելու ես: Միայն Տոն օրն ես ուզում առողջ լինել ցավերից և դրանից հետո մաշվել ցավերի մեջ. մի օր բժշկվել մեղքի վերքերից և ապա նույն վերքերը ստանալ ես ախորժում, մի օր հեռանալ դեկից, ապա նորից նրանից հանապազ տանջվել: Այդպիսիներն են, որոնք մի անգամ հաղորդվում են Սուրբ Խորհրդին և ապա մեղքի մեջ մաշվում են հանապազ: Ի՞նչ օգուտ մի անգամ հեռանալ սպանողի սրից, եթե վաղը նրա ձեռքը պիտի մատնվես, և կամ մի օր թագավորի հետ սեղան բազմել, իսկ մյուս օրը անողորմ դահիճների ձեռքը մատնվել: Նույնպես ոչ մի շահ և օգուտ չէ Ջատկի տոնին միայն վայելել Սուրբ Սեղանից և ապա պիղծ գործերով հեռանալ և հանապազ սատանայի հետ լինել: Ի՞նչ օգուտ տոնի ժամանակ գտնել պատվական քարեր և հաջորդ օրը կորցնել: Եվ ոչ էլ տոնին հաղորդվելն է օգուտ, երբ դարձյալ անարժան վարքով պիտի կորցնես: Ի՞նչ օգուտ Քրիստոսին մերժենալուց, երբ դարձյալ այնտեղից հեռանալով սատանային պիտի միաբանվես: Օգուտ չէ այսօր հրից խույս տալ և վաղը այրվել չարաչար: Եվ մխիթարություն չէ մի օր բանտից ելնել և թագավոր լինել, ապա դատապարտյալների հետ անողորմ տանջվել, և օգուտ չէ մի օր Խորհուրդը վայելել, ապա դատապարտյալների հետ դուրս ելնել: Ինչո՞ւ ես երկու ոտքից կաղում և երկու մտքերի միջև տաղտապում: Կամ դեերին պաշտոնյա դարձիր, կամ Քրիստոսի խորհրդակից: Մի օր սպիտակ գառ ես երևում, իսկ մի օր՝ սևաթույր այծ: Այսօր՝ հոգեկից Դավիթ, վաղը՝ Սավուղ այսահար, այսօր՝ հնազանդ Պետրոս, և վաղը ապստամբ Հուդա, այսօր՝ Քրիստոսի խորհրդակից, և վաղը՝ սատանայի կամարար: Այսօր՝ իբրև քրիստոնյա Տիրոջ Մարմինն ես վայելում, և վաղը իբրև չմկրտված՝ հեռանում ես Նրանից: Այսօր՝

խոստովանողների հետ, և վաղը՝ դրսում ուրացողների հետ: Այսօր հավատացյալների հետ Խորհրդի մեջ ես մտնում, և վաղը՝ անհավատների հետ դուրս ես ելնում: Ի՞նչ քեզ անվանեմ կամ ի՞նչ կոչեմ. երբեմն գառնացած, երբեմն գազանացած, երբեմն լուսազգեստ և երբեմն խավարապատ, այսօր Թագավորից պատիվ ես առնում, իսկ վաղը չես ընդունում և երես ես դարձնում: Այսպիսիք են նրանք, ովքեր մի որևէ օր հաղորդվում են Խորհրդին, և ապա իբրև չմկրտված, երեսը թեքելով դուրս են գալիս: Եթե արժանի ես Խորհրդին, մշտապես համարձակ վայելիր, որպեսզի հոգելից, Քրիստոսազգյաց և Քրիստոսընկալ լինես: Եվ եթե անարժան ես վարքով, Ջատկի տոնին էլ արժանավոր չես լինի:

Բայց եթե ասես, թե (Մեծ Պահքի) քառասուն օրերում սրբվեցի և ցանկանում եմ Սուրբ Խորհրդին մոտենալ, բարի է և ես գովում եմ, բայց, արդ, ինչո՞ւ մշտապես չես հաղորդվում: Չե՛մ կարող,-ասում ես,- ինձ մշտապես մաքուր պահել: Արդ, եթե այդպես ես մտածում, թե մի անգամ հաղորդվեմ տոնին, ապա հեռանամ, ուրեմն տոնին էլ արժանի չես հաղորդվելու, որովհետև չարի խորհուրդներն են քո մեջ: Ի՞նչ օգուտ, եթե մերժենաս Քրիստոսին և չհեռանաս սատանայից: Ի՞նչ օգուտ պատվական Դեղը ճաշակելուց, եթե ցավը քո ներսում ես պահում, ի՞նչ օգուտ բժշկի մոտ գնալուց, երբ վերքերից չես ուզում ազատվել: Ոչ մի օգուտ էլ հաղորդվելուց չես գտնի, եթե մեղքերից հեռանալ չցանկանաս, այլ կավելացնես դատապարտություն և տանջանքներ: Որովհետև եթե թագավորը լսեր, որ իշխաններից մեկն այսօր իր հետ խորհրդի մեջ է մտել, իսկ հաջորդ օրը հեռանալով իրենից թշնամիներին է խորհրդակից դարձել, մի՞թե դարձյալ նրան կընդունեն իր խորհրդի մեջ, այլ կկապեր, կտանջեր և կսպաներ: Իսկ որչա՞փ առավել ևս Քրիստոս կդատապարտի և կտանջի նրանց, որոնք այսօր կամենում են Նրա հետ Տերունական Խորհրդի մեջ մտնել, իսկ վաղը՝ Խորհրդից հեռանալ և թշնամու կամքը կատարել: Մի՞թե այսօր մաքուր կլինես մեղքից, եթե մտքումդ խորհես, թե վաղը կհեռանամ և իմ անձի կամքը կկատարեմ: Սա առավել ևս չար է Աստծո առջև: Խղճի հանդիմանությամբ մերժենալն այն է, երբ մեկը խորհում է մերժենալ Քրիստոսի Սուրբ Մարմնին և ապա հեռանալ Նրանից և Աստծո հրամաններից, սա՛ է երկմտությամբ ընդունելը, սա՛ է նենգությամբ հաղորդվելը և պատրանքներով, խաբեությամբ և թերահավատությամբ ճաշակելը: Սա բոլոր պղծություններից աղտեղագույնն է, երբ դարձյալ հեռանալ և նախկին չարին մերժենալ ես խորհում: Քանզի ասում է՝ մարդը, որը հեռանում է մեղքից և նույնին է վերադառնում, նման է շանը, որն իր փսխածին է վերադառնում:

Եվ արդ, այս ամենը իմանալով արժանավոր լինելով երկար ժամանակ մի՛ հեռացեք Սուրբ Խորհրդից և ո՛չ էլ անարժանությամբ հանդգնելով հավեք Սրբության Ահեղ Խորհրդին: Քանզի անարժաններին ահեղ պատիժ է սպասվում, որոնք խղճմտանքի հանդիմանությամբ հանդերձ հանդգնում են հաղորդվել. և պատիժ է սպասվում նաև այն արժանավորներին, որոնք հեղզանում և ծուլանում են երկար ժամանակով (մոտենալ Սուրբ Խորհրդին): Նաև մեծ երկյուղով մարդկանց զգուշացրեք և

բազում ջանքով անգիտության խավարը փարատեք, անհրավ բարկությունը, թշնամությունը, հիշաչար ոխակալությունը հեռացրեք ձեզնից, խորամանկությունը, քինախնդրությունը, նախանձը մերժե՛ք, տրտմությունը և մեծաբարբառ աղաղակը թոթափեք ձեզնից: Ազահներից, բամբասողներից, հարբեցողներից, զելիներից փախեք, չարաչքությունը, ատելությունը, ծածուկ նենգությունը դադարեցրե՛ք, թշնամիների հետ հաշտվեցե՛ք, ատելիներին սիրեցե՛ք, միմյանց հանցանքները ներեցե՛ք, ամբողջ սրտով միմյանց ծառայեցե՛ք, միմյանց հնազանդվեցե՛ք, միմյանց բեռներ վերցրե՛ք, միմյանց սիրեցե՛ք, ընկերոջը սեփական անձից լավը համարեցե՛ք, ձեր սրտերը սրբե՛ք, ձեր աչքերը խոնարհեցրե՛ք, ձեր լեզուները բամբասանքից դադարեցրե՛ք, ձեր մեղքերը ապաշխարեցե՛ք, ձեր խղճերը փարատեցե՛ք, հիմարությունը թոթափեցե՛ք, ծուլությունը ջանասիրության վերածե՛ք, պահքով պնդացե՛ք, աղոթքով պարապե՛ք, ողորմություն գործել հոժարեցե՛ք, գործերով առաքինացե՛ք, չարիք գործելուց հեռացե՛ք՝ ինչպես մանուկներ և հավատով կատարյալ եղե՛ք, որպեսզի այսպես ամեն առաքինություններով արժանավոր լինենք Ահավոր և Մեծ Խորհրդին՝ մեծ փափագով և կատարյալ սրբությամբ վայելենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ամենասուրբ և կենդանարար Մարմինը և Արյունը, Որին Փա՛ռք և Ջորություն հավիտյանս հավիտենից. ամեն: